

Արչի Գալենց. «Մշակույթը դիվանագիտության եղանակներից մեկն է»

Գերմանաբնակ անվանի գեղանկարիչ
Արչի Գալենցը պատասխանում է
ՕՐԵՐ եվրոպական ամսագրի
գլխավոր խմբագրի հարցերին

Կյանքն ու գործունեությունը

Արչի Գալենցը (Հարություն) ծնվել է 1971 թվականին Մոսկվայում՝ գեղանկարիչների հայտնի ընտանիքում: Սանկտյուրը անցկացրել է Երեւանում, իսկ 18 տարեկանից Մոսկվայից մշտապես տեղափոխվել է եւ ուսանել Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտում: Նա զավակն է հայտնի գեղանկարիչ Սարո Գալենցի, թոռը՝ Հարություն եւ Արմինե Կալենցների ու մայրական պապի՝ հռչակավոր քանդակագործ Նիկողայոս Նիկողոսյանի: Այնուհետեւ 1992 թվականից նրան հրավիրել են Բեռլին ուսանելու, որտեղ 2000 թվականին ավարտել է Բեռլինի Արվեստների համալսարանը: Այստեղ է նա ուսանել, թե ինչպես վերականգնել նկարները, ինչպես ցուցադրել արվեստի գործերն ու կարգավորել ցուցասրահների լուսավորությունը, ինչպես աշխատել մամուլի հետ:


Գեղանկարիչ եւ համադրող, արվեստի մեկնաբան Արչի Գալենցը մասնակցել է մոտ 80 միջազգային եւ հայաստանյան ցուցահանդեսների, որոնցից 12-ը՝ անհատական, արժանացել է մրցանակների, բազմիցս եղել է մամուլի ուշադրության կենտրոնում՝ հրատարակելով հարցազրույցներ: Ի դեպ, Գալենցն ինքն էլ հաճախ մշակութային թեմաներով զրույց է գերմանահայ մամուլի համար: Նրա արվեստում մշտապես առկա են հայկական ինքնությանն ու ժամանակի ընթացքում դրա փոխակերպումների մաշկմուկ թեմաներ: Գալենցը հայ գեղանկարիչներին միավորող «underconstruction» խմբի հիմնադիր անդամ է, Արվեստի եւ մշակութային հետազոտությունների լաբորատորիայի անդամ: Այսպիսով նա արդեն 32 տարի ապրում էւ աշխատում է Բեռլինում: Արցախյան պատերազմից հետո, Հայ մշակույթի օրերի շրջանակներում, նա

ներկայացավ «Ինքնահարցման վեց ճակատներ» խորագիրը կրող ցուցահանդեսով: 2022 թվականին Բեռլինում հրատարակվեց «Արչի Գալենց. Դիրքորոշումներ դեպի ամեն անհնարինը» գիրքը՝ նվիրված գեղանկարչության տեսությանը: Գրքի 12 բաժիններում տեղ են գտել նաեւ Արչի Գալենցի ամենակարեւոր ստեղծագործությունների պատկերները: Ինչպես արդեն նշեցինք, նրա հորական պապերը եւս հայտնի նկարիչներ են եղել խորհրդային Հայաստանում. իսկ նրանց տունը 2010թ. պետության աջակցությամբ վերածվել է թանգարանի, որն այսօր ցավոք չի գործում, եւ հոր մահվանից հետո դարձել է անհասանելի:

Մինչ այդ 2008 թվականին, Արչի Գալենցը Բեռլինի Վեդինգ թաղամասում բացել է «InteriorDasein» պատկերասրահը, որն անցած տարիների ընթացքում դարձավ ոչ միայն հայկական, այլեւ գերմանական արդի արվեստի ցուցադրության սիրված ու զնահատված վայր:

Եվ այդ ամենը Գալենցի անսահման նվիրվածության, աշխատասիրության ու բնատուր տաղանդի շնորհիվ: Իսկ 2019 թվականին Բեռլինում արվեստագետ Անդրեաս Վոլֆի հետ համագործակցությամբ բացվեց «Wolf&Galenz» պատկերասրահը, որտեղ հինգ տարվա ընթացքում երեսունից ավելի նշանակալի ցուցահանդեսներ են բացվել, այդ թվում՝ բազմաթիվ հայ արվեստագետների գործեր են ներկայացվել:

Ի դեպ, 2011 թվականին այս պատկերասրահում տեղի ունեցավ «ՕՐԵՐ» եվրոպական ամսագրի Արչի հայ արվեստին նվիրված բացառիկ համարի շնորհանդեսը:




Արչին մամուլի հասակում իր պապիկի Նիկողոս Նիկողոսյանի հետ

*Այս թեմայի
չարունակությունն էլ
մեր ներկա գրույցն է
անվանի
գեղանկարչի հետ:*

**-Սիրելի Արչի, հայ
նկարիչներն ի՞նչ
տեղ են
գբադեցնում
գերմանական
ժամանակակից
արվեստում, ի՞նչ
անուններ կնշեիր,
որոնք իրենց
արվեստով աչքի
են ընկնում:**

-Պետք է մի քանի մակարդակներով նայել այս հարցին: Չպետք է մոռանալ, որ ժամանակակից արվեստը սառը պատերազմի տարիներին ձեւավորված մի միջոց է՝ քաղաքականություն վարելու համար: Դա վերաբերում է նաեւ արվեստի մյուս ոլորտներին: Իգուր չէ, որ Բեռլինի կինոփառատոնում 2015-ին գլխավոր մրցանակ են տալիս պարսիկ բեմադրիչ Ջաֆար Պանահուն եւ նշում են դրա քաղաքական նշանակության մասին: Բեռլինը սառը պատերազմի մայրաքաղաքներից մեկն էր, որտեղ այդ կռիվը ամենակենսալից ձեւով էր տարվում: Դրա համար այստեղ անհնար է խոսել արվեստի մասին, նկատի ունենալով համամարդկային որակները, կրթվածությունը կամ ճաշակը: Դրանք այլեւս որեւէ դեր չեն խաղում կամ էլ շատ անհատական մակարդակների վրա են: Հայկական արվեստի մասին խոսելիս, պետք է նկատի ունենանք, որ դա նախ տեղի է ունենում որոշակի կառուցվածքների մեջ: Հայկական կերպարվեստը հոյակապ գործում է երկու մակարդակով՝ նախ պրիմիտիվ ինքնուսուցիչ աշխատանքները, որոնք կարող են մոտ լինել վերնիստի մակարդակին, լինեն թեթեւ եւ մարդկանց չպարտադրեն որեւէ բանի մասին մտածել: Դա իրականում շատ ցավալի փաստ է: Այդ կերպ շատ հաճախ չարաշահում են արվեստը: Ասենք մի սրահում ազատ պատ ունեն, մի նկար են կախում կամ մի համաժողով կա կազմակերպում, զուգահեռ ինչ որ ցուցահանդես բացում: Դրա դեմ պետք է աշխատել եւ փորձել մի այլ մակարդակի բերել, որը թույլ կտա հայ արվեստագետներին մտնել հասարակական այլ խավերի մեջ:

Հիմա մեր գալերիայում, որը հիմնել ենք Բեռլինում՝ InteriorDasein-ում, հնարավորություն են տալիս Հայաստանից եկած արվեստագետներին ցուցադրվել, քանի որ Բեռլինը արվեստի կարեւոր կենտրոն է: Փորձում ենք խմբակային ցուցահանդեսներում հայ արվեստագետներին ներկայացնել, որ օտար նկարիչների կողքին ցուցադրվեն նաեւ նրանց գործերը: Դա նաեւ հնարավորություն կտա տեսնել, թե ինչ ուղղություններ կան այսօր Եվրոպայում եւ ի՞նչ գնահատականներ են տալիս իրենց արվեստին օտարները: Անուններ չեն ցանկանա նշել, հակառակը հարցի տխուր կողմի մասին կարող են ասել: Կան հայեր, որ հաջողության են հասնում, բայց ձգտում են քողարկել իրենց հայ լինելը: Օրինակ, Նայիրի Բադրամյան անունով մի քանդակագործ ավելի ներկայանում է որպես պարսկուհի, քան իբրեւ հայ նկարչուհի: Ժամանակակից արվեստի դաշտը դա դիվանագիտության դաշտն է, եւ



Արչի Գալեյնգ. «Ռեքվիեմ», 1994թ.

պետք է հմտորեն մտնել այնտեղ: Երաժշտության մեջ մենք ունենք հաջողության հասած անուններ, բայց նկարչության մեջ մեզ անուններ չեն կարող նշել, որոնք Հայաստանի հետ կապը պահել են եւ հասել են հաջողության: Իհարկե, 2016 թվականին երբ Բունդեսթագը


ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, այդ փաստը հնարավորություն տվեց, որպեսզի այն արվեստագետները, որոնք աշխատում են ցեղասպանության կամ հիշողության թեմաների հետ, ուշադրության արժանանան: Օրինակ՝ Սիլվինա Տեր-Մկրտչյանի գործունեությունը մեծ ուշադրության է արժանանում: Ես կարելի եմ եմ ոչ այնքան արվեստագետների անհատական հաջողությունները, այլ այն աշխատանքը, որը հնարավորություն է տալիս զարգացնել հայ արվեստի ընդհանուր լանդշաֆտը:

**-Իսկ վերջին տարիներին այստեղ հաստատված
հայերը, որքանո՞վ են ներկայացնում հայկական
մշակույթը, որքանո՞վ են փոխանցում իրենց
զավակներին, համայնքը որքանո՞վ է
հետաքրքրված:**

- Ես կերպարվեստի մասնագետ եմ: Համայնքները կերպարվեստով չեն հետաքրքրվում: Ամենաշատը հետաքրքրվում են երաժշտությամբ, քանի որ միջոցառումներ են կազմակերպում՝ երգ, պար, երաժշտություն, երգիչներ կամ դաշնակահարներ եւ այլն: Ժամանակակից արվեստի ձեւերը հետաքրքիր չի մարդկանց: Իրենք նախընտրում են պահպանողական վիճակները: Իրենց երազանքը 19-րդ դարի սալոնն է: Չեն էլ փորձում ինչ որ բանով փոխել ներկա վիճակը:

**-Բեռլինում 2015 թվականից կազմակերպվում է
հայ մշակույթի օրեր: Դրանք բազմաբովանդակ
բնույթ ունեն. երաժշտություն եւ ասմունք,
ցուցահանդեսներ եւ դասախոսություններ:
Ինչքանո՞վ է գերմանական հասարակությունը
վայելում այդ օրերը կամ ընդունում հայ
արվեստը:**

- Քանի որ ընդհանուր աշխարհաքաղաքական զարգացումների կտրվածքով Հայաստանը գտնվում է Ռուսաստանի ազդեցության տակ, բնականաբար մշտապես նաեւ գտնվում էր այսպես կոչված «արդարացումների» մեջ: Մի կողմից դա մեզ երկու ճանապարհ էր տալիս: Կամ պետք է այլախոհության դերի մեջ մտնենք եւ մեզ չարաշահեն այդ խաղի մեջ, եւ ժամանակակից արվեստի դաշտը դրա համար է ստեղծված, մյուս կողմից մեզ ընձեռված հնարավորությունները օգտագործելով, պետք է ցույց տանք, որ ունենք մեր յուրահատուկ մշակույթը: Մեր մշակույթը պետք է ընկալվի ոչ թե 10-20 տարիների կտրվածքով, այլ հազարամյակների: Օրինակ, 2014



Արչի Գալենց
«Սահմաններ»
2004թ., գծանկար

թվականին հրատարակչություններից մեկն առաջարկեց իրենց մոտ հայ մշակույթի օրեր անցկացնել, եւ մենք կազմակերպեցինք ցուցահանդես, ֆիլմերի ցուցադրություն, գրքերի ներկայացում, դասախոսությունների շարք: Բոլորը մեր առաջարկներին արծազանքեցին եւ մասնակցեցին, եւ նրանք թվում գերմանացիներ: Արդյունքում դասախոսություններն այնքան շատացան, որ մենք ոչ մի ֆիլմ չկարողացանք ցուցադրել, քանի որ ազատ օր չմնաց: Դա շատ կարելու նշան է, որ իրոք մեծ հետաքրքրություն կա հայ մշակույթի նկատմամբ: Այդ ծեռնարկում ներկայացվեց 4 գիրք՝ «Հուշամատյան» նախագծի հրատարակությունը, Գիզելա Ռամմինգ Լոյպոլդի ճամփորդական գիրքը՝ Հայաստանի ու հայ սրբերի մասին, Մյուրիել Միրաք-Վայսբախի «Կրակե պատի մյուս կողմը. Հայաստան, Իրաք, Պաղեստին» գիրքը: Մենք հրավիրեցինք տասը տարբեր զեկուցողների, որոնց թվում էր նաեւ Հայաստանում Գերմանիայի նախկին դեսպան Շմիդտը:

Հայերի մոտ մի բան է իշխում՝ մենք յուրահատուկ ազգ ենք, անգնահատելի ենք, այլեւ ջանք կարող ենք չթափել եւ կարող ենք մեր ինքնությունը դրսում վաճառել, համոզված լինելով, որ ընտրյալ ազգ ենք: Կամ էլ ի հայտ են գալիս տարբեր կազմակերպություններ, որոնք մոնոպոլիզացնում

են մշակութային դաշտը: Մշակույթը պրոցես է, այն պետք է զարգացնել, եւ դրա համար սպասել, որ այն ինչ ունենք, ցույց կտանք եւ կգարմացնենք, դա այսօր չի գործում: Դա երկարատեւ ծրագիր է, պետք է կազմակերպել եւ պատշաճ ձեւով ներկայացնել: Մեր ցանցի աշխատանքի փորձից ելնելով կարող ենք ասել, որ մեծ կարիք կա տարբեր երկրներում մշակութային բյուրոների ստեղծման, ինչպես Բրիտանական խորհուրդն է, Գյոթե ինստիտուտը կամ Ֆրանսիական ինստիտուտը: Դա պետք է դիվանագիտական ներկայացուցչություններին զուգահեռ լինի: Մշակույթը պետք է լինի դիվանագիտության մի եղանակ: Իհարկե, ես իմ կողմից առանձին ցուցահանդեսներ բացել եմ: Օրինակ, 2022 թվականին ռուս-ուկրաինական պատերազմի առաջին ամիսներին ուկրաինահայ զեղանկարիչ Գագիկ Կուրդիյանի հետ համատեղ ցուցահանդեսը կոչվում էր «Մեկնաբանություններ բռնության եւ դավաճանության մասին», որը մեծ արծազանք գտավ: Գագիկը մեկնաբանում էր ոչ միայն իր, այլեւ մյուս զեղանկարիչների գործերը: Իսկ հաջորդ տարի՝ 2023-ին, մեր պատկերասրահում ուկրաինացի, բելառուս եւ ռուս արվեստագետուհիները ներկայացան «Սրտի բաբախում» ցուցահանդեսով: Մի այլ համատեղ ցուցահանդես էլ բացեցինք 2024-ի հունվարին, որ կոչվում էր «Միացյալ ընդդիմություն»: Հիշատակման են արժանի նաեւ մշակութային օրերի շրջանակներում իմ համադրմամբ բացված «Ինքնահարցման վեց ճակատները» խորագրով ցուցահանդեսը, որը ներառում էր նաեւ Արցախի կորստի թեման: Դեռեւս 2017 թվականին Երեւանում բացվեց իմ անհատական ցուցահանդեսը ժամանակակից արվեստի թանգարանում, իսկ 2021 թվականին Բեռլինում 50 ամյակիս առիթով «Փակ արարողություն» անհատական ցուցահանդեսը: Իմ նշած բոլոր օրինակները հավաստում են, որ ունենալով սեփական մշակութային տարածք, մենք կարող ենք ներկայացնել այն բոլոր թեմաներն ու



Երեւանում բացված Արչի Գալենցի անհատական ցուցահանդեսը, 2017թ.

գործերը, որոնք մեծ պատկերասրահներում կան թանգարաններում անհնար կլինեն ներկայացնել:

-Քո ընտանիքը թե՛ մայրական, եւ թե՛ հայրական կողմից հայտնի դեմքեր են հայ արվեստում: Մայրիկիդ հայրը ԽՍՀՄ ժողովրդական քանդակագործ Նիկողայոս Նիկողոսյանն է, հայրիկիդ ծնողները՝ Հարություն եւ Արմինիե Կալենցները: Հայրդ հայտնի գեղանկարիչ Սարո Գալենցն է: Բնականաբար քո մեջ կրում ես նրանց ազդեցությունը: Նրանցից ժառանգած հատկապես ո՞ր դասն ես իրականացնում քո արվեստում եւ կյանքում:

- Ես շատ ուժեղ ազդեցություն եմ կրել իմ հորից՝ սյուրռեալիստ Սարո Գալենցից, եւ միշտ այդ մասին ասել եմ: 2006 թվականին իր միակ անհատական ցուցահանդեսի համադրոդն եմ եղել: Ես մեծացել եմ այն սենյակում, ուր միշտ իր նկարներն են եղել՝ սյուրռեալիստական, շատ ինքնատիպ եւ բնականաբար ազդեցություն եմ կրել: Պապիկիս՝ Հարությունին, ես չեմ տեսել: Նրա ազդեցությունը թերեւս եղել է իր արվեստի միջոցով: Կալենցը յուրահատուկ նրբություն ուներ, մաքուր եւ ազնիվ արվեստագետ էր, չէր խաբում ու ստում արվեստում: Իսկ տատիկիս՝ Արմինե Կալենցին ոչ միայն տեսել եմ, այլեւ նա այն մարդն էր, ում հետ ես կարող էի կիսվել: Նա լսելու ունակություն ուներ: Տատիկս արտասահմանում ապրելու եւ սովորելու փորձառություն ուներ: 1939 թվականին տատիկս գնացել էր Իտալիա սովորելու եւ հենց այնտեղ էլ արվեստագետ դառնալու որոշում էր կայացրել: Հետո փնտրեց եւ գտավ իր տեղը այդ արվեստում: Ես այդ առումով շատ մոտ էի տատիկիս: Նա ինձ մի անգամ ասաց. «Ինչ էլ լինի, երբեք քո հոգու հետ փոխգիջման չգնաս»: Եվ դա ինձ համար ամենակարեւոր պատգամն էր: Պետք է արվեստագետի խիղճը մաքուր լինի: Վերջին տարիներին իմ վրա մեծ ազդեցություն թողեց նաեւ մայրական կողմից պապիկս՝ Նիկողայոս Նիկողոսյանը: Նա միշտ ասում էր, որ արվեստագետը երբեք չպետք է բավարարվի իր հասած հաջողություններով եւ հանգստանա: 99 տարեկան հասակում նա ամեն օր նկարում էր եւ ամեն օր քննությունն էր հանձնում ինքն իր առջեւ: Ամեն օր վախի մեջ էր, որ կարող է մի օր չստացվի, ուժը կորցնի, այլեւս հետաքրքրությունը կորցնի: Ու այս առումով, արդեն իբրեւ հասուն արվեստագետ, ես շատ կարեւոր դասեր քաղեցի իրենից: Եվ պաշտպանվելու կարողությունը, եւ գործերի ներկայացնելը, եւ քննադատության դեմ դուրս գալը:

Արվեստի մեջ այլ խնդիրներ կան, քան հաջողությունը: Հաջողությունը դա սկսնակի երազանքն է: Ի վերջո հաջողությունից հետո՝ առաջին բարձունքը գրավելուց հետո, դեռ սարեր են երեւում:

Անցյալին նայելով նաեւ կարող եմ ասել, որ մեր ընտանիքում որեւէ մեկը չի եղել կոմունիստական կուսակցության անդամ, չեն ծառայել իշխանություններին Ստալին կամ Լենին նկարելով:



Արչի Գալենցը Բեռլինի պատկերասրահում

Նրանք ամբողջատիրական ռեժիմի օրոք ապրել են իրենց արվեստով, եւ դա արդեն ինձ այստեղ՝ Բեռլինում ներշնչում էր, որ ես այստեղ կարող եմ մնալ արվեստի մեջ: Դա հենակետ պետք է լինի եւ ոչ թե՛ նպատակ: 2017 թվականին հայրիկիս մահանալուց հետո, ես կազմակերպեցի Գալենց հետազոտական կենտրոնը **galents-research.org** կայքէջի միջոցով, որտեղ ամբարում եմ մեր ընտանիքի արվեստագետների մասին ողջ լրատվությունը:

Իհարկե, նաեւ չեմ կարող չնշել, որ արդեն 7 տարի է, ես պայքարում եմ Կալենց գեղաստանի ժառանգության իրավունքների համար՝ բախվելով հայաստանյան արդարադատության համակարգի հարուցած խոչընդոտներին: Մանրամասները նշված են մեր կայքում: Ի դեպ, քանի որ թանգարանն այլեւս չի գործում, ըստ էության այդ առաքելությունն իր վրա է վերցրել կայքէջը, հատկապես, որ 2024թ ապրիլի 1-ի Թանգարանների մասին ՀՀ նոր օրենքով, բավականին լուրջ խոչընդոտներ են դնում մասնավոր թանգարանների առջեւ՝ ըստ էության անհնարին դարձնելով դրանց գործունեությունը:



Արչի Գալենց. «Հայաստանի գլոբուսը», 2021 թվականի ցուցահանդեսում



Լուսանկարում 2022 թվականին հրատարակված Գալենցի պատկերագրի շապիկը

-Գերմանական փորձը ինչպե՞ս օգնեց քեզ:

-Ես Գերմանիա եկա իբրև հյուր ուսանող ու միշտ զգացել եմ ժամանակավորապես մնալու զգացումը: Ես երբեք չեմ մտածել քաղաքացիություն վերցնել կամ մի այլ բան սովորել, որ ավելի լավ աշխատանք ու աշխատավարձ ստանամ: Ես առավելագույնս փորձ եմ ձեռք բերել Կալենցների տուն-թանգարանի համար: Դա փորձուց ինձ պարտադրել է: Հայրս ինձ ասում էր՝ «Դու այդտեղ ես սովորելու համար, երբ պետք լինի՝ կվերադառնաս եւ կղեկավարես թանգարանը»: 2007 թվականին, երբ Արմինե Կալենցը մահացավ, ես վերադարձա Երեւան եւ մի քանի տարի շարունակ պատրաստեցի թանգարանի բացումը: Այդ ընթացքում որոշեցի նաեւ թանգարանի էքսպոզիցիան, իսկ 2000 թվականին հրատարակեցի Հարություն եւ Արմինե Կալենցների գունավոր պատկերագրերը: Բեռլինում, իհարկե, շատ բաներ կային սովորելու. համալսարանում սովորել եմ արվեստի պատմություն, դիզայն, մենեջմենթ, աշխատել եմ ռեստավրատոր, մամուլի հետ եմ սկսել աշխատել, հողվածներ գրել: Այնուհետեւ իմ ցուցասրահը բացեցի, իմ աշխատանքները ներկայացրեցի, իմ այդ ողջ փորձը Կալենցի թանգարանի համար էր:

-Իսկ քո հիմնած գալերիան այժմ ի՞նչ գործունեություն է ծավալում:

-Գալերիան շարունակում է իր ակտիվ գործունեությունը, 2022 թվականի Տավուշի դեպքերից հետո օգոստոսի 9-ին «Wolf&Galenz» պակերասրահում մենք



Զրույցը վարեց Հակոբ Ասատրյանը

Լուսանկարում՝ Բեռլինի Wolf&Galenz պատկերասրահի բացումը 2019 թվականին

բացեցինք «Հայաստան. թուլանք եւ բռնություն: Բնապատկերների նկարներ եւ պատերազմի հետքեր» գեղանկարների եւ լուսանկարների ցուցահանդեսը: Ցուցահանդեսը նվիրված էր Հայաստանի Տավուշի մարզին, որը վերջերս Ադրբեջանից ենթարկվել էր զնդակոծության: Պատահական չէր, որ ձեռնարկին իր աջակցությունն էր բերել նաեւ Տավուշի արվեստագետների միության նախագահ, Տավուշի հոգեւոր վերածնունդ հիմնադրամի տնօրեն Արմինե Թումանյանը, ով ուղարկել էր Հարություն Չոբանյանի, Կարեն Մինասյանի եւ Դավիթ Բանուշյանի լուսանկարները՝ նվիրված ադրբեջանական հրետակոծությունների հետքերին: Ցուցադրեցինք նաեւ իմ հավաքածում առկա հայ անվանի արվեստագետների գեղանկարները եւ լուսանկարները: Դրանով ցույց տվեցինք, որ մենք մեր հայացքն ունենք բնության նկատմամբ:

Ի դեպ, արդեն իսկ նախապատրաստվում ենք հաջորդ տարի նշելու Բեռլինի հայկական մշակութային օրերի 10 ամյակը: Նաեւ ծրագրել եմ, 2025-ին պատկերասրահում ներկայացնել հայկական գեղանկարչությունը՝ ցուցադրելով թե՛ դասական վարպետների գործերը Եվրոպայում գտնվող անհատական հավաքածուներից, եւ թե՛ նոր երիտասարդ արվեստագետների, որոնք երեւան են գալիս եւ աջակցության կարիք ունեն: (<https://wolf-galentz.de/en/armenia-grace-and-violence-images-of-landscapes-and-traces-of-war/>)

-Կպատկերացնե՞իր, որ երկու տարի անց արդեն պետք է պայքարեինք Տավուշի չորս գյուղերի փրկության համար:

-Իհարկե, չէի պատկերացնի: Այս ցուցահանդեսի լուսանկարները օգտագործեցինք այս տարի Բեռլինում կազմակերպված «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման աջակցության համար կազմակերպված ձեռնարկի ժամանակ: Բեռլինում նաեւ ֆլեշմոբ արեցինք: Դեռեւս 2019 թվականին, երբ բոլորը դեռ էյֆորիայի մեջ էին, Կենտրոնիկ բիենալեից հետո մասնակիցների մի մասը եկան Բեռլին եւ այն գործերը, որոնք տեխնիկական պատճառով լիարժեք չէին ցուցադրվել այնտեղ, ներկայացրեցինք մեզ մոտ՝ Սուսաննա Գուլամիրյանի համադրությամբ: Արդեն իսկ քննադատում էին թավշյա հեղափոխությունը, որտեղ տեսանյութերում քաղաքացիական հասարակության ակտիվիստները խոսում էին իրենց խնդիրներից եւ նշում, որ հեղափոխությունը չարդարացրեց իրենց սպասելիքները: